



**ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

10 հոկտեմբերի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ.Նովիաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով դիմող Լյուսյա Սամվելյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լյուսյա Սամվելյանը 20.09.2011թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ «...ՆՏ Սահմանադրության 6-րդ, 8-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ, 23-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 204.2 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի եւ 204.4 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները»:

Դիմումին կցված դատական ակտերի եւ դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

ա/ վիճարկվող դրույթների սահմանադրականությունը չի կարող գնահատվել այլ դրույթներից մեկուսացված, այդ իսկ պարճառով անհրաժեշտ է վիճարկվող դրույթները դիտարկել ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթ-

ների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ: Այսպես, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ օրենսգիրք/ 36¹ գլուխը՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերաբերում է վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի թույլատրելիության չափանիշները, կարգադրության վարույթի անթույլատրելիության դեպքերը, վճարման կարգադրություն արձակելու դիմումին ներկայացվող պահանջները, դիմումի մերժման հիմքերը, վճարման կարգադրության բովանդակությունը եւ այլն: Դիմողի կողմից վիճարկվող դրույթները վերաբերում են, մասնավորապես, կարգադրության վարույթի անթույլատրելիության չափանիշներից մեկին /դրամական պահանջը կապված է դեռեւս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, օրենսգրքի 204.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ/, վճարման կարգադրություն արձակելու դիմումին ներկայացվող պահանջներից մեկին /հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռեւս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են /օրենսգրքի 204.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ/, դիմումի մերժման հիմքերից մեկին /պահանջը հաստատող ապացույցները կասկածելի են, օրենսգրքի 204.4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ/:

Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը՝ որպես հատուկ վարույթի փարատեսակ, դատարանների կողմից քննվում է օրենսգրքով նախատեսված դատավարության ընդհանուր կանոնների համաձայն, այն բացառություններով եւ լրացումներով, որոնք նախատեսված են օրենսգրքով: Օրենսդիրը վարույթի այս փարատեսակի նկատմամբ սահմանել է որոշակի կանոններ եւ պահանջներ: Ինչ վերաբերում է դիմողի կողմից վիճարկվող դրույթներին, ապա վերջիններիս սահմանադրաիրավական բովանդակությունը, դատական կազմի կարծիքով, որեւէ խնդիր չի առաջացնում, եթե հաշվի առնենք նաեւ այն հանգամանքը, որ դիմողը պարզաճ կերպով չի էլ հիմնավորել վերջիններիս ենթադրյալ հակասահմանադրականությունը, չի հիմնավորել նաեւ, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պարզառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դատարանի՝ ՄԴՌ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

բ/ դիմումի բովանդակության վերլուծությունը վկայում է, որ կոնկրետ փոխյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա

դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ, նշելով, մասնավորապես, որ «...նույն ապրանքի մեկ դափավորը անհիմն անվստահություն է հայտնում իր կոլեգա և նույն դափարանի մեկ այլ դափավորի կայացրած ու օրինական ուժ ստացած դափական ակտի նկատմամբ», կամ «...դափավորը պարտավոր էր գոնե իր կայացրած որոշման պարճառաբանական մասում մաքցելի կերպով «ջրի երես» հանել իր կասկածների հիմնավորումները» եւ այլն:

Նամաձայն ՆՏ սահմանադրական դափարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԳԱՌ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դափարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՆՏ սահմանադրական դափարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՆՏ սահմանադրական դափարանի թիվ 1 դափական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Դիմող Լյուսյա Սամվելյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ՝



**10 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԳԴԿՌ/1-25**